ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԴԱՍԱԳՐՔԵՐՈՎ ԱՊԱՀՈՎԵԼՈՒ ԿԱՐԳԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

1. Կարգում գործածվող տերմինները միանշանակ ընկալվելու համար առաջարկում ենք կարգում ներառել «Հասկացություններ» բաժին՝ հետևյալ բովանդակությամբ.

ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Սույն կարգում օգտագործվում են հետևյալ հասկացությունները.

- **Հանրակրթական առարկայի դասագիրք՝** դպրոցական գրականություն, որն իր մեջ ներառում է
- դասագիրքը, դասագրքին կից ուսուցչի ձեռնարկը (այսուհետ՝ ՈՒՁ) և այլ ուսումնական նյութերը,
- **Դասագիրք՝** հանրակրթական առարկայական չափորոշիչներին բավարարող թղթային կամ թվայնացված կամ էլեկտրոնային գիրք
- **Ուսուցչի ձեռնարկ՝** դասագրքին կից ուսուցչի համար նախատեսված էլեկտրոնային ձեռնարկ,
- **Այլ ուսումնական նյութ՝** դասագիրքը և ուսուցչի ձեռնարկը լրացնող և օժանդակող էլեկտրոնային նյութ,
- **Դասագրքերի հայտ՝** կրթություն ապահովելու նպատակով հաստատությանն անհրաժեշտ դասագրքերի խմբաքանակի ձևավորում,
- **Դասագրքերի շրջանառություն՝** տարբեր ուսումնական տարիների ընթացքում դասագրքի օգտագործում մի քանի սովորողի կողմից:

2. Կարգի 1-րդ կետը շարադրել հետևյալ բովանդակությամբ՝ «Սույն կարգով (այսուհետ՝ Կարգ) կարգավորվում են Հայաստանի Հանրապետության ուսումնական հաստատությունները դասագրքերով ապահովելու համար անհրաժեշտ հայտերի ձևավորման, դասագրքերի բաշխման և շրջանառության հետ կապված իրավահարաբերությունները»:

3. Կարգի 3-րդ կետը շարադրել հետևյալ բովանդակությամբ՝ «Հանրակրթական ուսումնական հաստատությունների (այսուհետ՝ Հաստատություն) անվամբ բացված հատուկ բանկային հաշիվներում առկա ներդրումային գումարների միջոցներով՝ որոնք կառավարվում են ԴՏՀՏՇՀ–ի կողմից (այսուհետ՝ Հաստատության միջոցներ), հրատարակված դասագրքերի հայտերի ձևավորման և շրջանառության գործընթացը իրականացվում է Դասագրքերի և տեղեկատվական հաղորդակցման

տեխնոլոգիաների շրջանառու հիմնադրամի (այսուհետ՝ ԴՏՀՏՇՀ) Կառավարման ավտոմատացված համակարգի (այսուհետ՝ ԿԱՀ) միջոցով»:

4. Կարգի 4-րդ կետի առաջին նախադասությունը շարադրել հետևյալ բովանդակությամբ՝ «Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի և օրենքով չարգելված այլ միջոցներով հրատարակված դասագրքերի հայտերի ձևավորման և շրջանառության գործընթացը իրականացվում է «Կրթական տեխնոլգիաների ազգային կենտրոն» ՊՈԱԿ-ի (այսուհետ՝ ԿՏԱԿ) Կրթության կառավարման տեղեկատվական համակարգի (այսուհետև՝ Համակարգ) միջոցով, այդ թվում՝»:
5. 4-րդ կետից հետո ավելացնել նոր կետ՝ հետագայում մի հատով ավելացնելով հերթական համարները, հետևյալ բովանդակությամբ՝ «Մինչև օգոստոսի 20-ը Նախարարության կողմից հաստատվում է սովորողների ծնողների (օրինական ներկայացուցիչների) կողմից դասագրքերի օգտագործման դիմաց ներդրումային գումարների տարեկան չափը: Տվյալ դասարանի դասագրքերի համար, այդ թվում՝ նույն առարկայի մեկից ավելի դասագրքերի պարագայում, կարող է սահմանվել գումարային ներդրման միասնական չափ»:
6. Կարգի 5-րդ կետը շարադրել հետևյալ բովանդակությամբ՝ «Սահմանամերձ համայնքների Հաստատության սովորողներին հատկացված դասագրքերի ներդրումային գումարները հատուցվում են՝ համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած կարգի»:
7. Կարգի 6-րդ կետը շարադրել հետևյալ բովանդակությամբ՝ «Հաստատության սոցիալապես անապահով ընտանիքների սովորողներին հատկացվող դասագրքերի համար ներդրումային գումարների փոխհատուցումն իրականացվում է Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի միջոցներից»:
8. Կարգի 8-րդ կետը շարադրել հետևյալ բովանդակությամբ՝ «Գրադարանում պահվող և երաշխավորված դասագրքերի ցանկում ընդգրկված դասագրքերը հաջորդ ուսումնական տարի հատկացվում են համապատասխան դասարանների սովորողներին»:
9. Ընդհանուր դրույթներ բաժնում ավելացնել ևս 4 կետ հետևյալ բովանդակությամբ՝
    - 10. Դասագրքերի օգտագործման ժամկետը սահմանվում է Նախարարության կողմից:
    - 11. Տարրական դասարանների դասագրքերը օգտագործվում է առնվազն երեք տարի բացառությամբ «Այբբենարան» և «Մաթեմատիկա-1» (առաջին մաս) դասագրքերի:
    - 12. Միջին և ավագ դասարանների դասագրքերը՝ հաշվի առնելով օգտագործման պարբերականությունը, օգտագործվում է երեքից յոթ տարի:
    - 13. Առանձին դասագրքերի օգտագործման ժամկետը կարող է երկարացվել Նախարարության կողմից:
10. Երկրորդ բաժնի վերնագիրը շարադրել հետևյալ բովանդակությամբ՝ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ, ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ՕՐԵՆՔՈՎ ՉԱՐԳԵԼՎԱԾ ԱՅԼ ՄԻՋՈՑՆԵՐՈՎ ՀՐԱՏԱՐԱԿՎԱԾ ԴԱՍԱԳՐՔԵՐԻ ՇՐՋԱՆԱՌՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԸ»:
11. Կարգի 10-րդ կետի «... մինչև մարտի 1-ը» բառերից հետո ավելացնել «Համակարգում» բառը:

12. Կարգի 17-րդ կետը շարադրել հետևյալ բովանդակությամբ՝ «Դասագրքերը հրատարակչությունների կողմից առաքվում են նախարարություն, մարզպետարաններ և Երևանի քաղաքապետարան, որոնք իրենց հերթին յուրաքանչյուր Հաստատությանն են հատկացնում իր հայտում նշված դասագրքերի քանակին համապատասխան դասագրքեր՝ հանձնման–ընդունման ակտի միջոցով»:
13. Կարգի 21-րդ կետից առաջ ավելացնել նոր կետ՝ հետագայում մի հատով ավելացնելով հերթական համարները, հետևյալ բովանդակությամբ՝ «Հաստատությունների միջոցներով հրատարակվող դասագրքերի հայտերը Հաստատությունը ԿԱՀ–ում ձևավորվում է մինչև մարտի 20–ը»:
14. Կարգի 21-րդ կետը շարադրել հետևյալ բովանդակությամբ՝ «Յուրաքանչյուր տարի մինչև ապրիլի 10-ը, Հաստատությունների միջոցներով հրատարակվող դասագրքերի համար Հաստատությունները ԿԱՀ-ում ձևավորված և էլեկտրոնային եղանակով հաստատված հանձնարարականները ներկայացնում են ԴՏՀՏՇՀ»:
15. Կարգի 23-րդ կետը շարադրել հետևյալ բովանդակությամբ՝ «Հաստատությանը կարող են հատկացվել անհրաժեշտ լրացուցիչ քանակի դասագրքեր՝ Հաստատությունից Հաստատություն փոխանցումով կամ լրացուցիչ հայտով (տպագրության համար բավարար քանակի առկայության դեպքում)»:
16. Կարգի 24-րդ կետը շարադրել հետևյալ բովանդակությամբ՝ «Հաստատությունից Հաստատություն դասագրքի փոխանցումը իրականացվում է հանձնման-ընդունման արձանագրությամբ»:
17. Կարգի 25-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝

    «Հաստատությունը՝

    1) հանձնման–ընդունման ակտում նշված քանակների համաձայն ստանում է դասագրքերը և որպես սեփականություն մուտքագրում Հաստատության գրադարանի գրադարանային ֆոնդ,
    2) դասագրքի օգտագործման ժամկետի ավարտից կամ նոր հրատարակությունով փոխարինելուց հետո կարող է սահմանված կարգով դասագրքերը դուրս գրել,
    3) կազմակերպում է ներդրվող գումարների հավաքագրման, Դասագրքերի հատկացման և ուսումնական տարվա ավարտին դրանց հետ հավաքագրման աշխատանքները՝ տնօրենի հրամանով նշանակված պատասխանատուի միջոցով,
    4) ուսումնական տարվա սկզբին Դասագրքերը հատկացնում է սովորողներին՝ մեկ ուսումնական տարի օգտագործման ժամկետով, իսկ ուսումնական տարվա ավարտին այն հետ հավաքում, Համակարգում և ԿԱՀ–ում կատարելով համապատասխան նշումներ,
    5) ապահովում է, որ սովորողների կողմից դասագրքերի ստացումը և վերադարձը ամրագրվի ծնողի (օրինական ներկայացուցիչների) և Հաստատության պատասխանատուի ստորագրությամբ,
    6) մինչև տվյալ ուսումնական տարվա նոյեմբերի 30-ը Հաստատությունների միջոցներով հրատարակված դասագրքերի համար սովորողների ծնողների (օրինական ներկայացուցիչներից) կողմից ներդրված գումարները մուտքագրում է Հաստատության համար առանձնացված բանկային հաշվին,

7) տարվա ընթացքում ստանում է իր բանկային հաշիվների քաղվածքները, ստուգում է բանկային գործարքների համապատասխանությունը և անհամապատասխանության դեպքում ձեռնարկում է անհրաժեշտ միջոցներ՝ սխալ գործարքների ճշտման ուղղությամբ,
8) պարբերաբար կատարում է դասագրքերի հաշվառում, կորած ու հետագա օգտագործման համար ոչ պիտանի դասագրքերի համար կազմում է համապատասխան ակտ, պահպանում է դասագրքերի պատվերների հայտերն ու հանձնարարականները, դասագրքերի հանձնման-ընդունման ակտերը, ներդրվող գումարների մուտքագրման անդորրագրերը, բանկային հաշիվների քաղվածքները,
9) դասագրքերի շարժի վերաբերյալ հաշվետվությունը, հանրությանը հասանելի դարձնելու նպատակով, յուրաքանչյուր տարվա մինչև հոկտեմբերի 30-ը, հաստատվում է ԿԱՀ–ում էլեկտրոնային ստորագրությամբ,
10) ի տես բոլորի (գրադարանում, հայտարարությունների տախտակին կամ աչքի ընկնող որևէ այլ տեղում)՝ փակցնում է դասագրքերի համար ներդրվող գումարների չափի վերաբերյալ Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակութի և սպորտի նախարարի հրամանը,
11) ապահովում է դասագրքերի խնամքը գործածության ընթացքում, ուսումնասիրում է ուսումնական տարվա վերջին հետ հավաքած դասագրքերի ֆիզիկական վիճակը և անհրաժեշտության դեպքում նորոգում է վնասված դասագրքերը՝ սահմանված ժամկետում օգտագործումն ապահովելու նպատակով,
12) Իրականացնում է սույն կարգից բխող այլ լիազորություններ»: